

ԱՐՏԱՇԵՍ ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆԻ
«ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹՅՈՒՆ» ԺՈՂՈՎԱԾՈՒՆ

Արտաշես Քալանթարյանը ժամանակակից այն գրողներից է, որի ստեղծագործությունը աչքի է ընկնում քաղաքացիական ակտիվությամբ, հասարակական հրատապ հարցերի արծարծումներով ու մարդու ճակատագրի համար խոր մտահոգությամբ: Դրա հերթական վկայությունն է նրա «Խոստովանություն» ժողովածուն, ուր ամփոփված է մամուլից արդեն հայտնի վիպակների մի շարք: Վերջին տարիներին գրած այդ ստեղծագործություններում Քալանթարյանը ներկայացնում է մեր ապրած ու ընթացիկ կյանքի տարբեր ոլորտներ, ստեղծում մարդկային բարդ փոխհարաբերություններով հատկանշվող իրականություն՝ իր ներքին հակասություններով, պայքարի սրությամբ, կյանքի ամենադաժան հանգամանքներում անգամ սեփական նկարագիրն անաղարտ պահող կերպարներով, մարդու ու մարդկային հաղթանակի կենսահաստատ լավատեսությամբ: Դա մեր կյանքում օրավուր աճող ու ահագնացող, հասարակական առաջընթացը արգելակող բացասական երևույթների դեմ պայքարի լավատեսություն է, որը երբեք էլ ուռա-հաղթանակներով չի պսակվում, այլ մարդկային արժեքների պահպանությունը հնարավոր է դառնում ծանր մաքառումների գնով՝ հաճախ հերոսներին կանգնեցնելով փակուղու առաջ: Ճիշտ այնպես, ինչպես իրական կյանքում: Այստեղից էլ Քալանթարյանի ստեղծագործության ամենաբնորոշ յուրահատկությունը. նա կարծես չի ստեղծագործում, այլ արձանագրում է կյանքը, գեղարվեստորեն պատկերում իրականն ու կատարվածը, որը ընթերցողին մղում է մտովի ընդարձակելու վիպական հյուսվածքի շրջանակները, համանման փաստերով ու իրողություններով լրացնելու ու հարստացնելու այն: Իրականության խոր ճանաչողությունը, հասարակական առաջընթացի օրինաչափությունների հակադրամիասնությունն ըմբռնելու կարողությունը և գաղափարական առողջ դիրքորոշումը ապահովում են հեղինակի ստեղծագործությունների հասարակական հնչեղությունը, ներկայացնում որպես ժամանակի պահանջի թելադրանք գրականություն:

Այսօրվա դիտակետից մեր հասարակության անցած ուղու պատկերն է ներկայացված «Գրվեց ապառաժ քարին» վիպակում: Երախտագետ ապրողները հուշարձան են կանգնեցնում պատերազմի զոհերի հիշատակին: Սրբազան երկյուղածություն պահանջող այս գործը հոնուտցիները վստահում են համագյուղացի քարգործ Սուրենին, որովհետև ինչքան դիմել են մայրաքաղաքի պրոֆեսիոնալ քանդակագործներին, միշտ նրանցից ստացել են վանող մի հարց. «Մեջը ինչքա՞ն փող կա»: Հուշարձանը դուռ է բացում մտորումների առաջ. ովքե՞ր են պատերազմի զոհերը, մի՞թե նրանք միայն, ովքեր ընկան կովի դաշտում: Իսկ սովից ու անտերությունից, կորուստների կսկիծից մեռածները, իսկ վերապրողները, ովքեր ամեն ինչի հասել են՝ այնպես էլ չկարողանալով ազատագրվել անցյալի ծանր բեռից: Մտորումները պարտադրում են հետադարձ մի հայացք, և այսօր կոլտնտեսության նախագահ, բայց այն օրերի զոհերի թեկնածու Յոլակի մտապատկերում վերակենդանանում է վաղուց կատարված մի միջադեպ: Պատերազմի այն դաժան օրերին, երբ գործում էր սովի մանգաղը, մի խումբ կանայք իրենց երեխաների հետ բարձրացել են հարևան գյուղին պատկանող սարը՝ կանաչի քաղելու: «Քաղում էին հևալով, շնչասպառ և երջանիկ, որ իրիկունը կարող են մի բան լցնել ջրի մեջ, խաշել ու դնել անտեր սեղանին, անտեր երեխաների ու անտեր ծերերի առաջ: Մի բան: Ինչ-որ բան: Ծամելու բան»:

Հանկարծ հայտնվում են փրփրաբաշ ձիերի վրա նստած հանդապահները, կալվեջ անում կանանց ու երեխաներին, խլում նրանց վաստակն ու կոխկրտում: Տասնամյա Յոլակը իր վրա է վերցնում մորն ուղղված մտրակի հարվածը, ցավից ու վիրավորանքից ճչում.

- Դուք ֆաշիստներ եք, ֆաշիստներ, ֆաշիստներ..., - և հանկարծ ինքն էլ չզգալով, թե ինչպես՝ հայհոյեց իր անհավատ պապերի նման: - Դուք մարդ չեք, է՛, մարդ, ես ձեր մարդ ասողի մերը...

Հանդապահները ապշած կանգ առան: Նայեցին այդ մի մատ չոր ոսկոր երեխային ու հանկարծ սկսեցին ծիծաղել.

- Որ Էդքան ուժեղ եք, գնացեք Հիտլերի դեմ կռվեք, է՛, - ասում էր Յուլակը՝ անգորության արցունքները խեղդելով: Անտեր մարդիկ եք գտել, չէ՞ ... Բա իմ հերը որ էստեղ լինեք, բա իմ ախպերը որ էստեղ լինեք, դուք կպրծնե՞ք:

Հանդապահներից մեկը դադարեց ծիծաղելուց, մռայլվեց միանգամից, ուժեղ մտրակեց ձիուն ու սլացավ սարն ի վեր՝ չարացած բղավելով.

- Տո՛, հարամ լինի էն հացը, որ մենք ենք ուտում: Հարամ...

Իսկ մյուսը, շարունակելով ծիծաղկոտ աչքերով Յուլակին նայել, ձայն տվեց նրա մորը.

- Ա՛յ աղջի, թուլիդ կապը քաշի գնա, մեղքի տակ չընկնեմ...

Ու Յուլակի մայրն ասաց.

- Դուք արդեն մեղքի մեջ ոտից գլուխ թաթախված եք, որովհետև խոտն ինչ է, սովից մեռնող մարդկանց խոտ էլ չեք թողնում՝ ուտեն, ու որովհետև էս մի մատ անմեղ երեխային էլ հայհոյել սովորեցրիք:

Վիպական գործողության մեջ ծավալվող այս պատկերում խտացել է 40-ական թվականների մանկության ողջ կենսագրությունը, որովհետև այն տևական նստվածք ունեցավ պատերազմից չվերադարձած մարտիկների զավակների ճակատագրում: Սա մի պատկեր է, որի թիկունքում կանգնած իրականությունը անսպառ նյութ կարող է տալ ստեղծագործողին՝ ցուցադրելու ծանր փորձությունների հաղթահարմամբ ապրելու հերոսականությունը:

Սակայն հուշարձանի պարտադրած հետադարձ հայացքը ավելի լայն շրջանակներ է ընդգրկում, Ալեքսանյան գերդաստանի պատմությամբ ներկայացնում մարդու ճակատագիրը հասարակական զարգացման առավել տևական մի ժամանակահատվածում: Հեղափոխական վերափոխումները հոնուսցիներին գտավ զարգացման մի այնպիսի կետում, երբ դեռևս մարդիկ համոզված էին, որ եթե կաթը վաճառեն, կովը կցամաքի, պտուղը վաճառեն՝ ծառը կչորանա, երբ մարդկանց աստվածը հողն էր, մարդու կոչումը՝ նրա վրա թափվող քրտինքը:

Թիֆլիսի անտառային դպրոցն ավարտած Սանասար Ալեքսանյանը կյանքի նպատակ է դարձրել լերկ տարածությունները պատել պտղատու այգիներով: Չնայած հոնուսցիները նրա առաջին հաջողությունները սատանայի միջամտությանն են վերագրում, բայց անսպասելի արդյունքները նրանց ոգևորում են, և Սանասար Ալեքսանյանը ոչ միայն Հոնուստում ու Տավուշի շրջանում, այլև հարևան շրջաններում այգետնկման մի բուռն ու ստեղծարար գործունեություն է ծավալում: Երբ վրա է հասնում կոլեկտիվացումը, Սանասարը ուրախանում է: Տեսնելով իր աշխատանքի համար բացվող փայլուն հեռանկարը, որ այլևս անհատների քմահաճույքներով չի առաջնորդվի, այլ գործը կծավալի պլանավորված ու թափով, նա գնում է հայրենի գյուղ՝ կոլտնտեսության անդամ դառնալու: Սակայն գյուղն արդեն որոշել էր Սանասար Ալեքսանյանին աքսորել, որովհետև ղեկավարներ էին դարձել մարդիկ, որոնք այնպես էլ չեն սիրել հողը ու ծառ չեն տնկել: Նրանց հարկավոր է եղել Սանասարի բարեշեն տունը, որ գրասենյակ դարձնեն, և Սանասարին աքսորում են մի այնպիսի տեղ, ուր ձուն ավազի մեջ եփվում էր:

Հողի ճշմարիտ աշխատավորը այդտեղ ևս շարունակում է իր ստեղծարար աշխատանքը՝ կիզիչ անապատներում այգիներ աճեցնելով: Իսկ գյուղում դրության տեր Բագրատ Թոփալյանն ու նրա նմանները աճուրդի են հանում Սանասարի ունեցվածքը և յուրացնում: «Այո՛, էդպես պիտի լինի, հերիք է, հիմի մենք պիտի քնենք հայրենիքի թշնամիների փափուկ թախտի վրա: Բա ի՞նչ», - ասում է Թոփալյանը՝ ի պատասխան ժողովրդի հեզնական հայացքների:

Չորս տարվա համառ դիմումների շնորհիվ Սանասարը արդարանում է, վերադառնում ընտանիքի գիրկը և, մոռացած ամեն վիշտ ու զրկանք, քեն ու զայրույթ, նորանոր այգիներ է զգում հայրենի գյուղում: Սակայն շուտով հասնում է հերթական հարվածը: Կուսակցությունը պահանջում է մեծացնել հացի արտադրությունը, Բագրատ Թոփալյանը որոշում է այն իրագործել այգիները կտրելու և տեղը հացահատիկ ցանելու ճանապարհով: Սանասարը չի կարողանում համոզել Թոփալյանին, որ հաց արտադրելու համար հողի պակասություն չկա, հարկավոր է միայն մշակել այն, և դիմում է շրջկենտրոն: Բայց քանի որ շրջանի ղեկավարն էլ նույն խմորից էր, այս անգամ Թոփալյանի բանսարկությամբ Սանասարին աքսորում են մի այնպիսի տեղ, ուր մարդու արյունը սառչում է երակներում: Սանասարը Միբիրում աճեցնում

է ցրտադիմացկուն ծառեր, շարունակում հողի աշխատավորի իր ազնիվ գործը, մինչև որ բացվում է փրկության մի ելք: Ելքը Հայրենական պատերազմն էր՝ դաժան մի քննություն, ուր վերջնական կերպարանք է ստանում մարդու քաղաքացիական նկարագիրը: Ղեկավարությունն ընդառաջում է Սանասարի ու նրա նմանների խնդրանքին ու թույլատրում մասնակցել ֆաշիստական հորդանների դեմ ծավալված ազատարար պատերազմին: Սանասարը ապրում է գերագույն ոգևորություն, որ թույլատրել են իր քաղաքացիական պարտքը կատարի հայրենիքի հանդեպ, հուսադրում է կնոջը, թե «Հոնուտ տանող ամենակարճ ճանապարհը Բեռլինի վրայով է: Կհաղթեն անիծյալ Հիտլերին՝ աշխարհին ու մարդկանց տառապանք ու ցավ բերողին, ու նոր տուն կգան: Հանգիստ սրտով: Ու եղ ժամանակ ինքը արդեն ոնց որ պետք է իր հաշիվները կմաքրի Հիտլերի հոնուտցի ծնունդ Բագրատ Թոփալյանի հետ»: Այդ կենսահաստատ լավատեսությամբ էլ նա դառնում է Հոնուտի առաջին զոհերից մեկը պատերազմում 1941 թ. օգոստոսի 24-ին ֆաշիստական ուրբակոծությունից մանկատան երեխաներին փրկելու ժամանակ:

Այո՛, անողոք ու դաժան ճակատագիր էր բաժին ընկել Սանասարին, բայց բոլոր փորձությունների մեջ նա կարողացավ պահել իր մարդկային վեհ նկարագիրը: Նա հաղթեց ավերող չարությանը՝ իր մահով անգամ սրբագործելով ապրելու իրավունքը, որովհետև այդ մահը իրոք հերոսական է: Փլվող առատաղի տակ Սանասարն իր մարմնով փրկեց մանկատան վերջին՝ վաթսուհինգերորդ որբին, ու «ճիշտ ապրելու ու անձնագոհության օրինակ դարձավ մեր երկրի ապագա վաթսուհինգ քաղաքացիների համար», իրենց խոր երախտագիտության հետ Սանասարի ընտանիքին են հաղորդում մանկատան փրկված երեխաները:

Պակաս դաժան չէր նաև Սանասար Ալեքսանյանի կնոջ ու երեխաների ճակատագիրը: Աղջիկը՝ Շամամը, սիրիքյան հոր կարոտը սրտում, բուժվում էր մայրաքաղաքի հիվանդանոցներից մեկում: Կենսախիհո ու տոկուն այդ աղջիկը անպայման կբուժվեր, եթե վրա չհասներ պատերազմը, և հիվանդանոցները չվերածվեին զինվորական հոսպիտալների: Զրկված բժշկական օգնությունից ու առողջարար սննդից՝ ոսկեծամ աղջիկը հանգչում է «անձայն, անտերունչ ու լուռ, ինչպես մոմը»: Փոքր որդին՝ Գրիգորը, տուկունությամբ հաղթահարում է այն ծանր զրկանքները, որ «հայրենիքի թշնամու» զավակի համար էր սահմանված: Ամենուր նրա դեմը փակող խտրականության պատնեշին ավելանում էր նաև թոփալյանների որդիների հալածանքը, որից Գրիգորը չի կարողանում փրկվել Երևան տեղափոխվելով անգամ: Նա գերազանց գնահատականներով ընդունվում է մանկավարժական տեխնիկում և օրերից մի օր իրեն գտնում Բագրատ Թոփալյանի համալսարանական որդու՝ Մանուչարի դիմաց:

- Պահ, դո՛ւ էստեղ ինչ ես անում, օձի՛ ճուտ:

- Տո, օձն էլ ես դու, աղվեսն էլ ես դու, էշն էլ ես դու... Էդ էլ քո բարն՝ն էր, անասո՛ւն:

Մանուչարը ապշած ետ-ետ գնաց և գրեթե մի բույե անցավ, մինչև ուշքի եկավ:

-Էդ, էդ ո՞վ է քո լեզուն էստեղ բացել, ա՛յ տղա,- կմկմաց նա,- հիմի ո՞նց ես, որ շուռ գամ ու էս բոլոր մարդկանց հայտնեմ, որ դու ժողովրդի թշնամու տղա ես: Ասենք էստեղ ինչի՞՞ եմ ասում, լսել եմ, որ տեխնիկում ես ընդունվել, կգամ, հենց էստեղ էլ կխոսենք: Սպասի՛ր, սպասի՛ր, ես քեզ կգտնեմ...,- ասաց ու արագ-արագ ցած իջավ Աբովյան փողոցով:

Գրիգորի թունավորված կյանքը Երևանում թեթևացնում է բախտակից Կարոն՝ ակամա դառնալով նրա կործանման պատճառը: Կոշկակար հորից սովորելով նրա արհեստը՝ Կարոն, ուսմանը զուգընթաց, գաղտնի կոշիկներ էր կարում, միջնորդների ձեռքով վաճառում կես գնով: Նա վախենում էր արգելված արհեստը բանեցնելու համար, գիտեր, որ բռնվելու դեպքում հոր պես բանտ է ընկնելու, բայց ուրիշ ելք չունեք. նրա վաստակին էին սպասում ծերացած մայրը, երեք քույրերը և բանտարկյալ հայրը:

Ընկերոջը նեղ վիճակից դուրս բերելու մտահոգությամբ Գրիգորը մի անգամ նրա կարած երկու գույգ կոշիկը վաճառելու է տանում հնակարկատի մոտ ու բռնվում հանցանքի վայրում: Հաջորդ առավոտյան պայթում է պատերազմը: Լեյտենանտ Մարկոսյանը, որ ամենայն բարեխղճությամբ կպարզեր գործի հանգամանքները, և հանցանքին համարժեք պատիժ կտային, կամավոր մեկնում է ռազմաճակատ՝ գործը թողնելով կապիտան Ադամյանին: Վերջինս Թոփալյանի պես մի սաղիստ է, որից երկյուղում է նույնիսկ նրա վերադասը և միայն մտովի կռվում նրա դեմ: «Դու միլիցիայի աշխատող չես,- մտքում ասում

էր նա,- դու միլիցիայի աշխատողի անունը վարկաբեկող ես: Որովհետև ո՛չ խիղճ ունես և ո՛չ էլ օրենքն ես հարգում: Քո տեղը սպանդանոցն է, բայց դու պատահաբար միլիցիա ես ընկել, և քեզնից ոչ մի փրկություն չկա»:

Ադամյանի հարկադրանքով մի տարով բանտարկում են Գրիգորին, ուր շենքից պատահականորեն ընկած դուլիի հարվածից գոհվում է նա:

Հոր պես դժվարին ու հերոսական ճանապարհ է անցնում Սանասար Ալեքսանյանի ավագ որդի Լևոնը՝ դառնալով հոնուտցիների վերջին գոհը պատերազմում: Լևոնը խելահաս պատանի էր, երբ հորը դարձրին ժողովրդի թշնամի: Կատարվածի անարդարացիության ու անհեթեթության գիտակցությամբ նա մաքառում է իրենց շուրջը ստեղծված թշնամական միջավայրի դեմ, ուղիներ փնտրում՝ հաստատելու հայրենիքի հարազատ զավակը լինելու իր իրավունքը: Նա կանխում է աքտորական հորը՝ ֆիննական պատերազմի ժամանակ կամավոր մեկնելով ռազմաճակատ: Բիրտ ուժերի ճնշումից ազատագրվածի ինչպիսի խնդություն է ապրում նա եղբոր մոտ, երբ պաշտպանության ժողկոմին գրած դիմումին դրական ընթացք են տալիս և գորակոչում բանակ: «Լևոնը իր եղբայր Գրիգորի հետ, զինկոմի որոշումը ձեռքին, կանգնել էր գրասենյակի առջև և անցնող-դարձողին փայլուն թուղթը ցույց տալով՝ ասում էր հեզնանքով.

- Թշնամին մենք ենք, հա՞: Ա՛յ, տեսե՛ք, որ ինձ բանակ են տանում: Տեսե՛ք, որ հատուկ կանչել են, որ գնամ պաշտպանեմ մեր մեծ հայրենիքը: Թշնամին մենք ենք, հա՞ ...

Իսկ Գրիգորը հրացայտ աչքերով մոտեցել էր տափարակի պոնկին և կոնկրետ հասցեներով էր բղավում.

- Մարկո՛ւս, սո՛ւտ Մարկոս, եզան աչքերո՛վ ու ուղեղո՛վ Մարկոս, դո՛ւրս արի: Արշա՛կ, որտե՞ղ ես դրում գլուխդ պահել, Նապո՛, Ճապո՛-Նապո՛, լազլազի ձա՛գ Նապո, դե՛, հիմի մեյդա՛ն արի, է՛, դե՛, դո՛ւրս եկեք, է, տեսնենք՝ ում մերը լաց կլինի... Էդ մենք էինք թշնամի, հա՞, մեզ Կարմիր բանակ են կանչել...

- Գործ չունես, Գրիգո՛ր ջան,- համոզում էր Լևոնը:- Զգո՛ւյշ, քեզ մենակ կբռնեցնեն, ախր աննամուս լակոտներ են, գործ չունես, ախպե՛ր ջան...

-Թող բռնեցնեն, - արհամարհանքով թքելով՝ ասում էր Գրիգորը,- դրանցից էլ վախեցող չկա, կարևորն էն է, որ մենք արդեն թշնամի չենք, ախպե՛ր ջան, որ քեզ բանակ են տանում: Իսկ որ քեզ տանում են, ինձ էլ կտանեն, չէ՞»:

Թշնամական միջավայրի կապարյա ծանրությունից Լևոնի ազատագրվելը սկսվում է հենց մոտակա կայարանից, երբ տեսնում է բանակ մեկնող տղաների անխտրական վերաբերմունքը իր նկատմամբ: Բայց նա մեկնում է բանակ՝ հոգում անթեղած մի խորին ցավ: «Երբ որ մեզ շարքով տանում էին բաղնիք, անց կացանք մեր հին տան առջևով: Հանկարծ հիշեցի, որ մենք լրիվ էինք, բոլորս իրար հետ, և հանկարծ հիշեցի, որ մենք երջանիկ էինք: Զարմանալի բան է, չէ՞: Երջանիկ ենք եղել և չենք իմացել: Կարծել ենք, թե սովորական բան է: Միրտս լցվեց ու շատ կարոտեցի: Դու գիտես՝ ում: Եթե հանկարծ որևէ տեղեկություն լինի, բանավոր թե գրավոր, ինձ իմաց տվեք»,- գրում է Լևոնը իր առաջին նամակում:

Հավասար ու անխտրական պայմաններում Լևոնն արագ առաջադիմում է, որպես խիզախ մարտիկ արժանանում է մեդալի, գործուղվում տանկային դպրոց: Բայց դպրոցն ավարտելու վրա մի վերջին անգամ նրան է հասնում Բագրատ Թոփալյանի ավերող ձեռքը և նրան զրկում հրամանատարի կոչումից: Երբ Գերմանիան սկսում է պատերազմը, Լևոնը առաջին հերթին այն ընկալում է որպես պատերազմ իրենց ընտանիքի դեմ, իրենց խարխլված ու տրորված երջանկության դեմ և կռվում է համառ ու անձնուրաց, կռվում է՝ հայացքի առաջ ունենալով իրենց բոլոր անձնական թշնամիներին՝ Հիտլերից մինչև թոփալյաններ, կռվում է՝ տիրապետած ատելության գիտակցությամբ:

«Կռվելով գնում ենք առաջ, մայրի՛կ ջան: Անցնում ենք ավերված քաղաքների ու հիմնահատակ կործանված գյուղերի միջով: Ես չէի կարծում, թե իմ հոգու մեջ այդքան ատելություն կարող է լինել: Հինն ու նորը գումարվել են իրար: Ի՞նչ էք ուզում մարդկանցից, առանց այն էլ հազար ցավի տեր են, ինչո՞ւ էք քանդում մարդկանց տները... Ինչո՞ւ չեք թողնում մարդն ապրի: Ինչո՞ւ էք լացացնում, նվաստացնում, ստորացնում... Երբ բաց եմ թողնում մի ական թշնամիու դիրքի վրա, հետն էլ ասում եմ,

- Էս այրված տների ու անտուն մարդկանց համար:

Մեկն էլ բաց եմ թողնում ու ասում,

- Էս էլ իմ տանջված Վարսենիկ մայրիկի համար:

Գոռում եմ ու կրակում, գոռում եմ ու կրակում բոլոր նրանց դեմ, ուվքեր տուն են քանդում, նրանց դեմ, որ չեն թողնում ապրենք, նրանց դեմ, ուվքեր ինձ չթողեցին տուն վերադառնալ ու պահել, պահպանել ձեզ: Ուվքեր սպանեցին իմ Սանասար հորը, Շամամ քույրիկին ու Գրիգոր եղբորը: Ուվքեր չթողեցին, որ Շողերը սպասի ինձ, ու սպանեցին նրա հույսը: Եվ ուվքեր քեզ մենակ են թողել աշխարհում, իմ տանջված, իմ միակ, իմ հերոս մայրիկ... Մայրիկների թագուհի...»:

Հայրենիքի իսկական զավակը արյան ծովերի մեջ դառնում է գվարդիայի ավագ լեյտենանտ, պարզևատրվում Կարմիր դրոշի, Կարմիր աստղի շքանշաններով ու մի շարք մեդալներով և պատերազմի հաղթական ավարտից երկու օր առաջ զոհվում մարտական առաջադրանքի կատարման ժամանակ: Նա զոհվում ու անմահանում է՝ թերևս ազատվելով պատերազմից հետո աքսորական հոր որդի լինելու մեղադրանքով երկրի ծայրագույն հյուսիս քշվելու տխուր հեռանկարից:

Ալեքսանյան գերդաստանի ահավոր ճակատագիրը յուրահատուկ իմաստավորում է ստանում Հայրենական պատերազմի ամենամեծ զոհի՝ գերդաստանի մայր Վարսենիկ աքոր կերպարում, հաստատում արհավիրքների դիմակայելու, ապրելու ու գոյատևելու ողբերգական հերոսականությունը:

Կարճատև է լինում Վարսենիկ աքոր ընտանեկան երջանկությունը աշխատասեր ամուսնու հովանու ներքո: Ամուսնու աքսորվելուց հետո նրա ուսերին է ընկնում երեք երեխայի պահպանության հոգսը թուփայանների հալածանքների պայմաններում: Նախ՝ նրան թույլ չեն տալիս բնակվելու հայրենի գյուղում, և նա երեխաների հետ ծվարում է գյուղից հեռու մի լքված գոմում: Աճուրդի են հանում նրա տան իրերը՝ չանտեսելով նույնիսկ երեխայի գարշուկը: Բայց տվյալ իրավիճակում ամենից ցավալին Վարսենիկ աքոր համար կարի մեքենան էր, որից զրկվելով՝ նա ստիպված էր սրա-նրա տանը կար անելով պահել փոքրիկներին: Ամուսնու արդարացումից հետո նրանց ընդունում են կոլտնտեսություն, և Վարսենիկ աքիրը դառնում է կոլտնտեսության ամենաչարքա աշխատավորը՝ միշտ հայտնվելով աշխատանքի ամենադժվար բնագավառում:

«Վարսենիկն էլ էր ծխախոտի վրա աշխատում: Եվ չէր զարմանում, որովհետև սովոր էր, որ միշտ անպայման իրեն պետք է ուղարկեն այն աշխատանքին, որն ամենածանրն է: Եվ թող շատ չերևակայի իրեն, որովհետև առանց այդ էլ մեծ լավություն են անում, որ թույլ են տալիս աշխատել կոլտնտեսությունում: Եվ Վարսենիկն այնպես էր աշխատում, ասես ամեն անգամ Գողգոթա էր բարձրանում և ուսին տանում էր իր խաչը՝ լուռ, համբերությամբ, անտրտուն»:

«Լուռ, համբերությամբ և անտրտուն»՝ Վարսենիկը դիմագրավում է կյանքի դաժան փորձություններին, դիմանում իր մեծ կորուստների կսկիծին, աշխարհին ու մարդկանց նայում անչար ու ջինջ հայացքով՝ երբեք չաղարտելով հոգու մաքրությունը: Ամբողջ ունեցվածքը միանգամից կորցրած Վարսենիկը ուրախանում է, երբ նկատում է, որ թիթեղյա վառարանը մոռացել, աճուրդի չեն հանել, և ուրախությունից լաց է լինում, երբ իմանում է, որ մի քանի աղքատ համագյուղացի աճուրդից մի քանի իր են առել՝ հետագայում իրեն նվիրելու համար: Չարի ու բարու ահեղ գոտեմարտում ազնիվ մարդկանց այդ բարձր մարդկայնությունն է, որ Վարսենիկին կապում է հասարակությանը, դարձնում նրա հոգսերով ապրող պայծառ մի անհատականություն: Նա դառնում է ընդհանուրի մայրը, ապրում մարդկանց հոգսերով և ուրախություններով, իր գոյությամբ բովանդակավորում շրջապատի խիղճն ու բարոյականությունը: Նա ձեռք է մեկնում բոլորին, ուվքեր զգում են իր կարիքը, ուվքեր կանգնել են փակուղու առաջ: Նորահարսը չի ուզում ապրել ամուսնու կայծակնահար լինելուց հետո, և գյուղի միակ հույսը Վարսենիկ աքոր փրկար միջամտությունն է:

- Մարդը մեռնում է միայն այն ժամանակ, աղջիկ ջան, երբ նրան հիշող չկա: Որ դու չլինես, ո՞վ է հիշելու Բենիկին: Քո կարծիքով, ինչո՞ւ եմ ապրում,, Իսկի մտածե՞լ ես...

Աղջիկը ետ ընկավ բարձին ու հանկարծ քանդվեց, փղձկաց, լաց եղավ այդ ամբողջ պատմության ընթացքում առաջին անգամ:

Իսկ Վարսենիկ աքիրը հանդարտ դուրս ելավ տնից ու աղջկա խորտակված ծնողներին ասաց.

- Հանգիստ եղե՛ք, կապրի Անթառամը:

Եվ Անթառամը ապրեց:

Իր երկարատև տառապանքի ճանապարհին Վարսենիկ աքոր շուրթերը միայն մի անգամ են հուսաբեկ բառեր արտասանում, և նրա աչքերի աղի արցունքները մի անգամ են միայն կողմնակի մարդուն տեսանելի դառնում: Ահա ամբողջ գիշերը գաղտնի լացելուց հետո կայարանում որդուն չոր աչքով բանակ ճանապարհող մոր խոսքը, ուր մայրական անմնացորդ սիրուն գումարվում է նաև հոգու ընկճվածությունը:

- Լևո՛ն ջան, իմ տղա՛ ու ախպե՛ր ջան, ես մի դժբախտ ու տանջված կին եմ: Եվ աշխարհի մեջ ոչ մի բան չունեմ, բացի իմ զավակներից: Ու կարծես թե գրված է իմ ճակատին, որ իմ սրտից հա պիտի պոկեն ու տանեն: Սկզբից քո հերը գնաց, հիմնի էլ դու ես գնում: Գնա՛, բան չունեմ ասելու, գնա՛, բայց խղճա ինձ ու պահի՛ր քեզ ինձ համար: Մեղք եմ:

Հարագատների անդառնալի կորստի կսկիծը հոգում անթեղած կնոջ արցունքները երևում են միայն այն ժամանակ, երբ հանդիպում է Լևոնի սիրած Շողերին ու իմանում, որ վերջինս իր տղայի անունը դրել է Լևոն: Դա հավերժացման այն յուրահատուկ խորհուրդն է, որ մարդուն կապում է կյանքին, մղում նրան ապրելու:

Եվ ապրում է Վասենիկ աքիրը, ապրում է՝ վերջին պատառ հացը կիսելով շրջապատի հետ, ապրում վեհաշուք արժանապատվությամբ, երբեք չխոսելով ու անբառ, չթողնելով խոսեն իր մեծ կորուստների մասին, որպեսզի բառերը չհասարակացնեն նրա մեծ ապրումները:

Քալանթարյանը ստեղծել է հարուստ ներաշխարհի տեր, ամբողջական ու ավարտուն գրական մի կերպար, ուր խտացել են տանջված ու բազմաչարչար հայ կնոջ հոգեկան բարեմասնությունները՝ հաստատելով չարը տոկունությամբ հաղթահարելու, ավերումի ու ոչնչացման դեմ ապրելու և գոյատևելու ժողովրդական կենսահաստատ լավատեսությունը:

- Իմ կռիվը աստծո հետ է եղել: Աստված պատերազմ սկսեց իմ դեմ, բայց ես հաղթող դուրս եկա: Որովհետև նա խլեց ինձանից ինչ ունեի ես, բայց իմ խիղճն ու միտքը չկարողացավ խլել,- տասնամյակների հեռվից Վարսենիկ աքիրը այսպես է գնահատում իր ապրած կյանքի իմաստն ու ապրելու խորհուրդը:

«Խղճի ու մտքի» անաղարտության համար մղվող պայքարն է ընկած նաև «Միրի մերձավորիդ» վիպակի հիմքում: Հեղինակը վիպական գործողություններն սկսում է իր ստեղծագործության մեջ հաճախակի հանդիպող դրամատիկորեն սրված մի կետից, որը դառնում է յուրահատուկ բանալի մարդկային բարդ փոխհարաբերությունների լաբիրինթոսը թափանցելու ճանապարհին:

Ուշ երեկոյան տուն վերադառնալով՝ աղբատար մեքենայի վարորդ Վիրաբը ականա լսում է կնոջ ու աղջկա խոսակցությունը.

- Որ իմանա, չի ուզի: Չի ուզի, էլի, մա՛մ: Որ իմանա, չի ուզի:

Վիրաբը կանգ առավ զարմացած:

- Ի՞նչ գիտես, ա՛յ աղջի,- հարցրեց Մարգոն:

- Գիտեմ, էլի,- լաց էր լինում Մուսանը:- Որ իմանա՝ հայրս աղբ հավաքող է, չի ուզի: Աղբ հավաքողից ո՞վ աղջիկ կուզի, ա՛յ մամ:

- Իսկ դու ինչո՞ւ ես ասում, թե աղբ թափող է, ասա վարորդ է,- ասաց Մարգոն:

- Չի՞ հարցնի, թե ինչ վարորդ է: Ասում ես, էլի... Ավտոբուս է քշո՞ւմ, թե տաքսի: Ի՞նչ ասեմ: Ի՞նչ դժբախտություն է, մամ ջան, ի՞նչ դժբախտություն:

Խոհանոցում մի քար լռություն տիրեց, և այդ լռության մեջ Վիրաբը լսեց, թե ինչպես է ցավով, տագնապահար, անկանոն զարկում սիրտը:

Հիմա Մարգոն ի՞նչ կասի: Տեսնես ի՞նչ կպատասխանի Մարգոն:

- Բա ես ի՞նչ ասեմ,- հանկարծ աղջկա լացակումած ձայնով ասաց Մարգոն,- ե՞ս ինչ ասեմ, որ ամբողջ կյանքում եմ ամաչել: Այնքան սուտ եմ ասել, որ մի տոկոսն էլ հերիք է դժոխքի կրակի մեջ խորովվելու համար: Բայց ի՞նչ կարող ենք անել, աղջի՛կ ջան, մեր ճակատին էլ դա է գրված: Ի՞նչ կարող ենք անել:

Անակնկալից ապշահար Վիրաբը փշրված հոգով դուրս է գալիս տնից և ավտոբուսի կանգառի նստարանին կծկված՝ ծանր մտորում. «Ուրեմն անպտուղ ու սո՞ւտ է եղել ապրած ամբողջ կյանքը»:

Իսկ այդ կյանքը եղել է անձնագոհ նվիրումի քսանամյա մի երկար ճանապարհ:

Վիրաբը ծնողներ չտեսած մի որբ էր, որը դաստիարակվել էր մանկատանը, ավարտել աշխատանքային ռեգերվմերի հատուկ ուսումնարանը և գործուղվել ավտոտեխնիկում: Այստեղ էլ նա հանդիպում է իրենից ավելի թշվառ ու անօգնական Մարգոյին, որին օր ու արև չէին տալիս տեխնիկումի «քաջալ խուժանները»: Երկու անտեր որբի ճակատագիր խաչաձևվում են իրար, և Վիրաբը երդվում է «աշխարհի ինատու» կատարել կարելին ու անկարելին՝ Մարգոյին երջանիկ դարձնելու համար: Եվ երբ տեխնիկումն ավարտելուց հետո դիրեկտորը նրան աշխատանք է առաջարկում, նրա առաջ բացվում են առաջադիմելու հեռանկարները, Վիրաբը հրաժարվում է, որովհետև իր Մարգոյին առաջին հերթին բնակարան էր հարկավոր, որը կարող էր ստանալ աղբատար մեքենայի վարորդ դառնալու պայմանով միայն: Բարձր վարձատրությամբ այդ աշխատանքը լիուլի բավարարում է լիարժեք կյանքի այն պատկերացումը, որ ուներ Վիրաբը: Ի՞նչ էր պակասում: Անտեր որբերը դարձել են տուն ու տեղի տեր, ապրուստի նեղություն չեն կրում, և Վիրաբը ինքնամոռաց նվիրվածությամբ բավարարում է կնոջ ու աղջկա պահանջները: Այդ համեստ երջանկությունը, սակայն, մեթոդիկ հաճախականությամբ ճեղքեր է տալիս քաղթենիացող հասարակական միջավայրի ճնշման տակ: Մարգոն կամաց-կամաց ընկնում է քաղթենիական հոգեբանության ճահիճը, իրեն նվաստացած ու դժբախտ զգում ամուսնու աշխատանքի բնույթի համար: Առաջին հարվածը Վիրաբը ստանում է այն ժամանակ, երբ Մարգոյին կրթություն տալուց և գրասենյակային աշխատանքում տեղավորելուց հետո ցանկություն է հայտնում ինքը ևս շարունակել ուսումը: Ամուսնու բարձր աշխատավարձը կորցնելու ահից Մարգոն ընդդիմանում է նրան, մինչդեռ Վիրաբը նրանից սպասում է հակառակ վերաբերմունք: «Այնինչ Վիրաբն ուզում էր, որ նա ուզի: Որ նա համոզի, ստիպի իրեն՝ սովորելու: Որ ասի... «Հերիք է, Վիրա՛բ ջան, հիմա հո ամեն ինչ ունենք, հո առաջվա նման որբ ու անտեր չենք, գնա՛ սովորի, ախպե՛ր տան»:

Բայց Մարգոն ոչ մի այդպիսի բան չասաց: Ոչ մի բան: Ու անմիջապես շուտ տվեց խոսքը: Եվ Վիրաբը հոգով մենակ, անօգնական ու ավելորդ զգաց իրեն:

Մարգոն ամաչում էր, որ իր բարեկեցիկ կյանքի աղբյուրը աղբատար մեքենան է, խնամքով թաքցնում էր ամուսնու աշխատանքի տեղը, հյուրեր ունեցած ժամանակ աշխատում այնպես անել, որ Վիրաբը չշփվի նրանց հետ: Աշխարհին ու մարդկանց պարզ հայացքով նայող Վիրաբը այդ ամենը վերագրում է կնոջ բնավորության տարօրինակություններին, մխիթարվում, որ կինը համենայն դեպս իր ընկերուհիների պես չի ծխում, որ ամեն անգամ սիրով ու ցնծությամբ է ընդունում իր գնած նվերները, որ ինքը ունի ընտանեկան մի փոքրիկ երջանկություն: Եվ դա այն դեպքում, երբ նա տնից դուրս բերվող աղբով անսխալ որոշում է, թե տերերից յուրաքանչյուրն ինչպիսի կյանքով է ապրում, թե ինչպես է նյութականի ժանգը շերտավորված նստվածք տալիս հասարակության բարիքները անարգել յուրացնող խավերի հոգեբանության վրա:

Վիրաբը մենակ չէ քաղթենիական միջավայրի դիմաց: Նրա հետ են ֆիզկուլտուրայի ուսուցիչ Ստեփան Մադոյանն ու տեխնիկումի դիրեկտոր Արգամ Թոռչյանը, աղքատ ուսանող Խոսրովն ու ակադեմիկոս Պարսամյանը, ուժեղ նկարագրի տեր մարդիկ, որոնք իրենց ճանապարհն անցնում են ազնիվ ու շիտակ՝ հենց այդ պատճառով էլ դառնալով խորթ ու չգիտակցված: Մեռնում է բազմաթիվ սերունդների դաստիարակ Թոռչյանը. նրա հարազատ որդիներն անգամ չեն ապրում կորստի այն կսկիծը, որ մարդկային է: Ուսանող Խաչիկը սիրահարվում է մի աղջկա՝ չիմանալով, որ նա ամենանողկալի փողոցային կյանքով է ապրում: Ակադեմիկոս Պարսամյանը կանգնել է փակուղու առջև՝ տեսնելով, որ իր տված գիտությունը այլևս պետք չէ հեշտ ճանապարհով փառքի ու բարեկեցության ձգտող շրջապատին:

Ցուցադրելով մարդկային արժեքների կորստի այս համընդհանուր դրաման, հերոսներին կանգնեցնելով «ի՞նչ անել, ինչպե՞ս ապրել այսուհետև» տանջալի հարցերի առջև՝ հեղինակը իր սթափեցնող ձայնն է բարձրացնում կյանքի մռայլ երևույթների դեմ, առաջին պլանի վրա դնում հասարակական բարոյականության առողջացման համար պայքարի անհրաժեշտության հարցը:

Քաղքենիական հոգեբանության պատճառած ավերածություններն ավելի լայն պլանի վրա է ցուցադրվում «Մովսես ապեր» վիպակում:

Իրավաբանական պրակտիկայում կոփված Մարկոս Մարգարյանի տանը թեժ մարտեր են սկսվել: Մարկոսը Շամշադինում մենակ մնացած հորը հրավիրել է իր մոտ ապրելու, կինը նախկին հինգ-սենյականոց բնակարանում տեղ չի գտնում սկեսրայրի համար: Մարտերը թեժանում են մանավանդ այն ժամանակ, երբ Մարկոսը ճարահատ առաջարկում է պատշգամբի թախտը, որը ընտանիքի հարազատ անդամի՝ շնիկ Տուզիկ Մարկոսի Մարգարյանի անկապտելի սեփականությունն է: Ծանր ճակատամարտում «հաղթում» է Մարկոսը՝ հարկադրում պատշգամբը տրամադրել Մովսես ապորը:

Քալիս է Մովսես ապերը, և որդու դռան շեմից սկիզբ է առնում երկու քաղաքակրթությունների բախումը: Երկու քաղաքակրթություն է իրար կողք կողքի՝ բազմաթիվ թելերով կապված իրար, բայց և աներևակայելիորեն հեռու իրարից, հեռու՝ իրենց մտածելակերպով ու գործելակերպով, հակադիր՝ իրենց նիստ ու կացով, մարդու ու մարդկայինի նկատմամբ ունեցած պատկերացումով: Կյանքի դժվարին, բայց ազնիվ ճանապարհ անցած, ապրուստի հոգսը միշտ ուղեկից ունեցած գյուղացին սարսափում է բնակարանի հատակի ողորկությունից և որդու աջակցությամբ մտնելով տուն՝ նկատում է, որ այն հիշեցնում է Վորոնցովի պալատը Թիֆլիսում: Մովսես ապոր առաջին տպավորությունը լինում է այն, որ որդին ապրում է «հարամությամբ»:

«Ու գիտե՞ս մեջս ինչի կասկած ընկավ, տղա՛ ջան,- չի կարողանում չասել Մովսես ապերը: Կասկած ընկավ, որովհետև նախ և առաջ տունդ աշխատող մարդու տան նման չէ, ոնց որ քո տունը չլինի, հասկանո՞ւմ ես, ոնց որ ուրիշի տուն լինի: Հետո շա՛տ սիրուն ես խոսում, շա՛տ սիրուն, է՛... Հիմի, ախր, ցավդ տանեմ, ով գողանում է, բոլորից շատ է գոռում ազնվության մասին, որ գլխի չընկնեն: Բայց մեկ է, գլխի են ընկնում»:

Շուտով քուրդ Հասոյի միջադեպով Մովսես ապերը համոզվում է, թե իրավաբան որդին ինչ ճանապարհներով է տունը լցրել թանգարանային իրերով:

Մի անհամ կատակի համար Հասոյի որդուն բանտարկել են: Գործը հասել է Մարկոս Մարգարյանին, որը որոշել է բեկանել դատական վճիռը, որովհետև շատ խիստ էին վարվել: Իսկ երբ պատահաբար Հասոն կանգնում է նրա դիմաց որպես խնդրող, վերջինս մտնում է իր իսկական դերի մեջ, գործը ծանրացնում այն աստիճան, որ խեղճ ծերունին պատրաստակամություն է հայտնում տուն-տեղ ծախել որդուն ազատելու համար: «Մաքուր», «ազնիվ», «բարի» բառերից վաղուց խորշող, դրանք բանաստեղծների ստեղծած պոպուլյար համարող իրավաբանը կյանքի երկար ճանապարհ է անցել, շրջապատից յուրացրել մարդկանց խեղճացնելու արվեստը՝ երբեք չմոռանալով իր առաջին գործերից մեկը, երբ մեղադրյալին արդարացնող դատավճիռ կայացրեց, իսկ նրանք չվեցին՝ անշնորհակալ ու աննկատ:

Մովսես ապերն ընդամենը երկու օր է դիմանում քաղաքում՝ մտքում միշտ փայփայելով հեքիաթի սև ձին, որ իրեն թոցնի հարազատ միջավայր: Բայց այդ երկու օրը իր խտացած միջադեպերով հավասարազոր է Ողիսևսի տասը տարիներին: Տասնամյակների սովորությամբ նա արթնանում է վաղ առավոտյան, չիմանալով ուտում Տուզիկի համար պատրաստված դիետիկ ճաշը՝ խոր վիշտ պատճառելով հարսին: Շենքի մուտքից դեռ դուրս չեկած՝ ականատես է լինում նախածանոթ ինժեների անբարոյական վարքագծին և ակամա դառնում խալիսված ընտանիքի քայքայման պատճառ: Նա խանութում փորձում է կարգի հրավիրել ապրանքը սեփական գնով վաճառող գործակատարին և դառնում ընդհանուրի զայրույթի ու ծաղրի առարկան, անասելի վիրավորանք ստանում այն քաղքենուհուց, որի շահերը փորձում էր պաշտպանել:

«Ո՞վ է անգրագետ, ֆու, կակայա նագլոստ, անգրագետը Դուք եք, մի Ձեզ նայեք, Ձեր հոգուստին նայեք, զգվում եմ մելոչնի մարդկանցից, սրանցից մեկն էլ մեր տանը կա... Այս քաղաքը տեր չունի, տեր,-

չէր հանգստանում խորապես վիրավորված կինը: - Քաղաք մտնող ավտոբուսներն են ստիպում լվանալ, իսկ մարդկանց ազատ բաց են թողնում: Ֆի՛»:

Մովսես ապերը ավելի ծանր անարգանքի է հանդիպում ռեստորանում, ուր նրա միամիտ պատկերացումները բախվում են իրականությանը: Ծանր ու տանջալի աշխատանքի դիմաց ամսական հարյուր ռուբլի վաստակող գյուղացու ուղեղում չի տեղավորվում այն իրողությունը, որ ռեստորանում նվագող «դիոլչի լակոտները» մի քանի ժամում հազարներ են գրպանում, կամ համագյուղացի Մուշեղի թոռ Գարուշը, մետաղյա կոճակներ արտադրելով, այնքան է հղփացել, որ փողը կապերով շարտում է անձանոթ պարուհու ոտքերի տակ: Եվ դա այն դեպքում, երբ նրա պապը յոթանասուն տարեկանում դեռևս հունձ է անում, բայց չի վաստակում այնքան, որ կարողանա խարխլված տան տանիքը կարկատել կամ կուրացած կնոջը տանել քաղաք՝ բժշկելու:

Հուսաբեկ կանգնած այդ ամենի դիմաց՝ Մովսես ապերը եռ է գալիս, գայրույթի խոսքեր շարտում անտարբեր միջավայրի երեսին և փշրված հոգով փախչում քաղաքից: Տեսանելի համոզականությամբ պատկերելով մեր հասարակարգում խաղաղ գոյակցող սոցիալական հակապատկերները՝ հեղինակը իր հերոսին չի դարձնում արդարության համար պայքարի մարտիկ. Մովսես ապերը միայն միջոց է՝ հասարակական կյանքում խոր արմատներ գցած այլասերումը ցուցադրելու համար:

Եվ քանի որ այլասերմանը համարժեք պայքար չի ծավալվում այլասերման դեմ, Քալանթարյանը նման պայքարը տեղադրում է դիդակտիկ-արկածային վիպական կառուցվածքում, արտակարգի, անսովորի, եզակիի օգնությամբ տալիս մի մասնավոր չարիքի հայտնաբերման ու վերացման ընթացքը: «Կանխամտածված սպանություն» վիպակում պատկերվում է, թե ինչպես գործարանի ղեկավար անձնակազմը տասնամյակներ շարունակ կողոպտել է հասարակական բարիքը, իսկ նրանց դեմ պայքարը մնացել է անհետևանք, պայքարողը՝ որակվել զրպարտիչ: Տասնհինգամյա համառ ահազանգերից հետո Վասակ Սերոբյանը կողոպտիչներին ջրի երես հանելու համար դիմում է աննախընթաց քայլի: Իմանալով, որ մի քանի օր հետո պիտի մահանա, նա թունավորում է իրեն ու մահանում, բայց գործը այնպես է կազմակերպում, որ հանցագործների պարագլուխը թակարդն է ընկնում որպես մարդասպան, և օրինապահ մարմիններին այլ բան չի մնում, քան Անդրանիկ Աթայանի ու նրա խմբի չարաշահումները բացահայտելն ու պատժելը:

Հայտնաբերվեց ու դատապարտվեց ավազակային մի խումբ, բայց դրանով չարիքը վերացա՞վ: Հարազատ մնալով իրականությանը՝ Քալանթարյանը այդ հարցին դրական պատասխան չի տալիս, որովհետև նրան չի բավարարում մեր օրերում խոր արմատներ ձգած չարիքի դեմ պայքարի ձևական բնույթը, և առաջադրում է համընդհանուր, սկզբունքային ու անզիջում պայքարի խնդիր: Խոստում ու բնութագրական է վիպակի վերջը: Անդրանիկ Աթայանի ու նրա խմբի դատավարության աղմուկը արթնացնում է պետական հիմնարկների տարբեր օղակներում քնած բյուրոկրատներին, որոնք ծուլորեն գործի են անցնում:

«Կուսակցության քաղաքային կոմիտեի քարտուղարը ցած դրեց լսափողը և հավաքեց հանրապետության դատախազի հեռախոսի համարը:

- Բարև Ձեզ,- ասաց նա:- Հենց նոր ինձ զանգահարեցին և շատ իրավացիորեն դիտողություն արեցին աշխատավորական նամակներին պատշաճ ուշադրություն չդարձնելու համար: Առաջիկա պլենումում իմ զեկուցումն է դրված և Ձեր հաշվետվությունը՝ այդ հարցում: Չէ՛, բայց խղճի՞ բան է, ինչ տեղի է ունենում Ձեզ մոտ: Նորմալ ու ներելի՞ էք համարում, որ մարդը մեռնում է, ու նոր են միայն նրա ահազանգերը տեղ հասնում: Ահազանգեր, որոնք կարող էին նույնիսկ կանխել հանցագործությունը: Մա մեծ, չափազանց մեծ դաս պետք է լինի մեզ համար: Այնպես որ, նախապատրաստվեք»:

Նույն ալարկոտությամբ ներքին գործերի նախարարն է հրահանգում քաղաքի վարչության պետին. «Աշխատեք ինքնաքննադատաբար խիստ լինել Ձեր և Ձեր աշխատողների նկատմամբ, որպեսզի ուրիշներին հնարավորություն չտաք ավելի խիստ լինելու: Ինձ թվում է, թե հասկացաք»:

Եվ այսպես շարունակ: Ամեն օղակում նիստերի են հավաքվում, քննադատությանը գումարում են նույնիսկ ինքնաքննադատություն՝ առանց գործնական, իրականության թելադրանքից ելնող միջոցների

դիմելու: Իսկ կյանքը ընթանում է իր հունով, և այդ հունով երեկվա այլասերումն ու թալանը բազմապակած չափերով պատուհասում են ժողովրդին, ստիպում բախտ որոնել օտար ափերում, երբ հայրենիքը կանգնած է ծանրաձանր մարտահրավերների առջև:

Քալանթարյանն իր վիպակում ստեղծում է մարդկային բարդ փոխհարաբերություններ, վիպական լարված իրավիճակներ, քննադատում կյանքի արատավոր կողմերը, դատապարտության խոսք ասում հասարակական առաջընթացը խանգարող երևույթների դեմ: Նա միաժամանակ հանդես է բերում ազնիվ մեծամասնությանը ներկայացնող կերպարներ, որոնք կյանքի բեռը տանում են իրենց ուսերին, չարիքի հաղթահարման տևական գոտեմարտում մնում շիտակ ու ամբողջական, իրենցով հաստատում մարդու մարդկային ու քաղաքացիական նկարագրի վեհությունը: Հենց այդ հատկանիշներով էլ «Խոստովանություն» ժողովածուն աչքի է ընկնում արդիական հնչեղությամբ, ընթերցվում լարված հետաքրքրությամբ և մտորումների դուռ բացում մերօրյա ընթերցողների առջև: Մնում է ասպարեզ դուրս գան այդ ընթերցողները, որ սպասում ենք մատաղ սերնդից:

